Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր Ն 06390000

«Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

«10» հուլիսի 2017թ. ք.Երևան

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմը, որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, ի դեմս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար Նելսոն Զուլոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա և «Այդենտիստ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Նոնա Աբրահամյանի, որը գործում է «Այդենտիստ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2017 թվականի հունիսի 28-ի թիվ 2089-Ա և 2017 թվականի հուլիսի 10-ի թիվ 2177-Ա հրամանները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պատվիրատուի և Կատարողի միջև 2017 թվականի մարտի 6-ին կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» թիվ ՀՀ ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-06390000 պայմանագրի

   1) հավելված 2-ը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված 1-ի,

   2) հավելված 6-ի «07.02.03.01 Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» տողը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված 2-ի:
2. Սույն համաձայնագիրը իր հավելվածներով կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն համաձայնագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:
4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի և Կատարողի կողմից ստորագրվելու պահից և տարածվում է 2017 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀՀ ԱՆ աշխատակազմի
ղեկավար՝ Ն.Զուլոյան

Aug 4 2017 9:34 AM

/ստորագրություն/

«Այդենտիստ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ն.Աբրահամյան

/ստորագրություն/

Digitally signed by ABRAHAMYAN NONA 6602820745
Date: 2017.07.31 11:22:23 GMT+04:00